

18689

Վ. Ա. ՄՈՒՏՈՎԻ

+

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱՔԵՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ


ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱՄԽՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1940

327(47)

Մ-86

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ





327(47)  
586

27 SEP 2006  
PA  
5856

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

5829

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ  
և Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսար  
ընկ. վ. Մ. Մոլոտովի զեկուցումը  
ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 1940 թ. մարտի 29-ի նիստում

609.002 Ժան. 937

75445  
929

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵԵՐԵՎԱՆ • 1940



## ՀԱԿԵՐ ՊԵԿՈՎԱՏԱՆՔԻ:

Գերազույն Խորհրդի վերջին սեսիայի ժամանակից անցել է հինգ ամիս: Այս փոքր ժամանակաշրջանում կատարվեցին այնպիսի իրադարձություններ, վորոնք առաջնակարգ նշանակություն ունեն միջազգային հարաբերությունների դարդացման մեջ: Այս կապակցությամբ անհրաժեշտ է Գերազույն Խորհրդի ներկա սեսիայում քննության առնել մեր արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերը:

Միջազգային կյանքում կատարված վերջին իրադարձություններն անհրաժեշտ են քննարկել, ամենից առաջ, այն պատերազմի լույսի տակ, վորոն սկսվեց Կենտրոնական Յերրուսալյան անցյալ տարվա աշնանը: Անդլո-Փրանսական բլոկի և Գերմանիայի միջև տեղի ունեցող պատերազմում մինչև այժմ չեն յեղել խոչըն ճակատամարտեր և դործը սահմանափակել են առանձին ընդհարումներով, գլխավորապես ծովի վրա, ինչպես նաև ողում: Հայտնի յեն, սակայն, վոր գեռեն անցյալ տարվա վերջին՝ Գերմանիայի արտահայտած խաղաղության ձգումը մերժվեց Անդլիայի և Ֆրանսիայի կառավարությունների կողմից, վորի հետեւանքով՝ յերկու կողմերից ավելի՝ ևս ուժեղացավ պատերազմի ծավալման նախապատրաստությունը:

Գերմանիան, վորը վերջին ժամանակաշրջանում միավորեց մինչև 80 մելիուն գերմանացիների, իր տիրապետության տակ գրեց վարուժական պետություններ և մեծապես ուժեղացավ ռազմական տեսակետից, ինչպես յերեսում է, վտանգավոր մրցակից և դարձել Յեվրոպայի գլխավոր խմբերիալիստական տերությունների—Անդլիայի և Ֆրանսիայի համար: Ուստի, Լեհաստանի հանդեպ իրենց պարտավորությունների կատարման պատրվակով, նրանք պատերազմ հայտարարեցին Գերմանիային: Այժմ հատկապես պարզ յերեսում է, թե այդ տերությունների կառավարու-



474-91

В. М. МОЛОТОВ

ВНЕШНЯЯ ПОЛИТИКА ПРАВИТЕЛЬСТВА

Государственное издательство политической литературы

Ереван ● 1940

թյունների իսկական նպատակները վորքա՛ն հեռու յեն քայ-քայլած լեհաստանի կամ Զեխո-Սլովակիայի պաշտպանության չահերից։ Այդ յերեսում և արդեն այն բանից, վոր Սլովակիայի և Ֆրանսիայի կառավարություններն այդ պատերազմի մեջ իրեն իրենց նպատակ հռչակեցին Գերմանիայի ջախճախումն ու մասնառումը, թեև այդ նպատակները ժողովրդական մասաներից գեռես թագվորմ են «գեմոկրատական» յերկրների և փոքր ժողովուրդների «իրավունքների» պաշտպանության լողունդներով։

Քանի վոր Խորհրդային Միությունը չուզեց դառնալ Անդիայի ու Ֆրանսիայի աշակեցը Գերմանիայի դեմ ուղղված այդ խմբերիալիստական քաղաքականության կիրառման գործում, նրանց թշնամական դիրքը Խորհրդային Միության վերաբերմամբ ե՛լ ավելի ուժեղացավ, ակնառու կերպով վկայելով, թե վորքա՛ն խորն են սոցիալիստական պետության դեմ խմբերիալիստների թշնամական քաղաքականության դասակարգային արմատները։ Իսկ ֆինլանդիայում սկսմած պատերազմն անդլո-ֆրանսական խմբերիալիստները պատրաստ ենին յելակես դարձնել ԽՍՀՄ դեմ պատերազմելու համար, այդ նպատակով ուղարկործելով վոչ միայն բուն Ֆինլանդիան, այլև սկսմոդինավյան յերկրները—Շվեդիան ու Նորվեգիան։

Խորհրդային Միության վերաբերմունքը Յեվրոպայում ծավալու պատերազմի նկատմամբ հայտնի յե։ Խաղաղամարությամբ տողորված Խորհրդային Միության արտաքին քաղաքականությունն այստեղ ևս ցուցադրվեց լիակատար վորոշակիությամբ։ Խորհրդային Միությունը հենց միանդից հայտարարեց, վոր ինքը կանգնած է չեղոքության դիրքերի վրա և անշեղորեն կիրառել ե այդ քաղաքականությունն անցած ամբողջ ժամանակաշրջանում։

Խորհրդային Միության և Գերմանիայի փոխարքարերությունների մեջ գեղի լավը կատարված կտրուկ շրջադարձն իր արտահայտությունը գտավ չհարձակվելու պայմանագրի մեջ, վորն ստորագրվեց անցյալ տարվա ողոսաստում։ Խորհրդային-ուկրամանական այս նոր, լավ հարաբերությունները փորձով ստորագրվեցին նախկին լեհաստանում տեղի ունեցած իրագարձությունների կապակցությամբ և բա-

վականաչափ ցույց տվելին իրենց հաստատուն լինելը։ Տնաեական հարաբերությունների դեռ այն ժամանակ, անցյալ ուարվա աշխանը, նախատեսված գարգացումն իր կոնկրետ արտահայտությունը գտավ դեռևս ողոսաստոյան (1939 թ.), իսկ այնուհետեւ՝ փետրվարյան (1940 թ.) առեւտրական համաձայնությունների մեջ։ Ապրանքաշրջանառությունը Գերմանիայի ու ԽՍՀՄ միջև սկսեց աճել փոխադարձ տընտեսական ողոտակարության չիման վրա, և հիմքեր կան նրա հետագա զարգացման համար։

Մեր հարաբերություններն Անդիայի ու Ֆրանսիայի հետ դասավորվեցին մի փոքր այլ կերպ։ Քանի վոր Խորհրդային Միությունը չցանկացավ դառնալ անդլո-ֆրանսական խմբերիալիստների զենքը համաշխարհային հեղամոնիայի համար ընդդեմ Գերմանիայի նրանց մղած պայքարում, մենք ամեն մի քայլափոխում ստիպված եյխնք լինում հանդիպելու նրանց քաղաքականության խոր թշնամությանը մեր յերկրի վերաբերմամբ։ Բանն ամենից հեռու գնաց Փինլանդական հարցում, վորի վրա յես կանգ կառնեմ քիչ հետո։ Բայց վերջին ամիսների ընթացքում յեղել են ԽՍՀՄ վերաբերմամբ Փրանսական ու անդիական քաղաքականության թշնամանքի շատ այլ փաստներ ևս։

Բավական և մատնանշել, վոր Փրանսական իշխանությունները չդատն ավելի լավ բան, քան թե յերկու ամիս սրանից առաջ Փարիզի մեր առեւտրական ներկայացուցչության վրա վոստիկանական հարձակում գործելը։ Առեւտրական ներկայացուցչության մեջ կատարված խուզարկությունը, չնայած բոլոր բժանուրություններին, չտվեց վորեն արգյունք։ Այդ խուզարկությունը միայն խայտառակեց այս այլանդակ գործը նախաձեռնողներին և ցույց տվեց, վոր մեր յերկրի վերաբերմամբ թշնամական այդ ակտի համար չկար վորեն ուսուլ առիթ։ Ինչպես մենք տեսնում ենք Փրանսիայում մեր լիազորներկայացուցիչ ընկ. Սուրբցին հետ կանչելու գործի հետ կապված հանդամանքներից, Փրանսական կառավարությունն արհեստական շարժառիթներ և փնտում Խորհրդային Միության վերաբերմամբ իր անբարյացակամությունն ընդգծելու համար։ Վորենուն պարզ լինի, թե Խորհրդային Միությունն ավելի չի շա-

Հաղողոված յերկու յերկրների փոխարարերություններով, քան թե Ֆրանսիան, մենք ընկ. Սուրբին հետ կանչեցինք Ֆրանսիայում լիազորներկայացուցչի պոստից:

Կամ վերցրեք ԽՍՀՄ վերաբերմամբ թշնամական ակտերի այնպիսի որինակներ, ինչպես Հեռավոր Արևելքում անդվիական սաղմանավերի կողմից մեր յերկու շոգենավերի գրավումը, փորոնք Վլադիվոստոկ ելին դալիս՝ Ամերիկայում և Չինաստանում մեր գնած ապրանքներով։ Յեթե դրան ավելացնենք այնպիսի փաստեր, ինչպես՝ արդյունաբերական սարքավորման մեր հին պատվերների կատարումից հրաժարվելն Անդվիայում, առևտրական ներկայացուցչության դրամական գումարների վրա կարանք դնելը Ֆրանսիայում և շատ այլ փաստեր, ապա Խորհրդային Միության վերաբերմամբ անդվիական ու Ֆրանսական իշխանությունների գործողությունների թշնամականությունը կերևա ել ավելի մեծ չափով։

Փորձեր են յեղել մեր արտաքին առևտրի վերաբերմամբ այդ թշնամական ակտերն արդարացնել նրանով, թե Գերմանիայի հետ ունեցած մեր առևտրով մենք վերջինիս ողնում ենք Անդվիայի և Ֆրանսիայի դեմ մղվող պատերազմում։ Դժվար չե համոզվել, վոր այդ փաստարկումները մի քոյզ չարժեն։ Դրա համար հարկավոր ե ԽՍՀՄ-ը համեմատել թեկուզ Ռումինիայի հետ։ Հայտնի յե, վոր Ռումինիայի ամբողջ արտաքին ապրանքաշրջանառության կեռ մասը կազմում է առևտուրը Գերմանիայի հետ, ըստիրում Ռումինիայի ազգային արտադրանքի բաժինը Գերմանիա կատարվող եքսպորտի մեջ, որինակ, այնպիսի հիմնական ապրանքների գծով, ինչպես՝ նավթամթերքներն ու հացահատիկը, մեծապես գերազանցում ե ԽՍՀՄ ազգային արտադրանքի բաժինը Գերմանիա կատարվող մեր եքսպորտի մեջ։ Այսուամենայնիվ, Ռումինիայի վերաբերմամբ Անդվիայի և Ֆրանսիայի կառավարությունը չեն գիտում թշնամական ակտերի և հնարավոր չեն համարում պահանջել, վոր Ռումինիան գալարեցնի իր առևտուրը Գերմանիայի հետ։ Միանգամայն այլ վերաբերմունք գոյություն ունի գեղի Խորհրդային Միությունը։ Հետեւապես, Խորհրդային Միության վերաբերմամբ Անդվիայի ու Ֆրանսական թշնամական ակտերի մեջ գույքը ե գալիս մյուս յերկրների պարոններին, թե՞ դուք չե գալիս։ (Բուռն, յերկարածու ծափակարարություններ)։

Եկտերը բացատրվում են վոչ թե Գերմանիայի հետ ԽՍՀՄ առևտրով, այլ նրանով, վոր վիճեցին անդլո-Ֆրանսական կառավարող ըշջանների հաշիվները՝ մեր յերկիրն սդատգործելու Գերմանիայի դեմ մղվող պատերազմում, և նրանք, այդ բանը նկատի ունենալով, վրեժիններության քաղաքականություն են վարում Խորհրդային Միության վերաբերմամբ։

Անհրաժեշտ ե ավելացնել, վոր այս բոլոր թշնամական գործողություններն Անդվիայի և Ֆրանսիայի կողմից կատարվում ենին չնայած այն բանին, վոր Խորհրդային Միությունը մինչև այժմ վորեւ անբարյացակամ գործողություն չի ձեռնարկել այդ յերկրների վերաբերմամբ։ Իսկ Խորհրդային Միությանը վերաբերվող Փանտաստիկ պլանները՝ Կարմիր Բանակի ինչ-վոր արշավների մասին «զեպի Հընդկաստան», «գեպի Արևելք» և այլն—այնպիսի ակնհայտ արտառող բան են, վոր նման անհեթեթ գատարկախոսությանը կարող են հավատալ միայն խելքները բոլորովին թողքած մարդիկ։ (Ծիծաղ)։ Բանն, իհարկե, այդ չե։ Բանն ակներեւ վորեն այն ե, վոր Խորհրդային Միության կողմից կիրառվող չեղողքության քաղաքականությունը դուք չեկավ անդլո-Ֆրանսական կառավարող ըշջանների քիմքին։ Մանավանդ, վոր նրանց նյարդերն ըստ յերևութին բոլորովին կանոնավոր վոր վիճակում չեն։ (Ծիծաղ)։ Նրանք ուզում են մեր զգին մասթաթեր այլ քաղաքականություն—Գերմանիայի դեմ թշնամության ու պատերազմի քաղաքականություն, վորը նրանց հնարավորություն տար ԽՍՀՄ-ն ողտազործել իմպերիալիստական նպատակներով։ Կարծեք թե ժամանակն ե, վորպեսզի այդ պարոնայք հականան, վոր Խորհրդային Միություն ուրիշի քաղաքականության զենք չե՝ յեղել ու յերբեք ել չենի, վոր ԽՍՀՄ-ը միշտ վարել ե ու կվարի իր սեփական քաղաքականությունը, առանց հաշվի առնելու՝ այդ գույքը ե գալիս։ (Բուռն, յերկարածու ծափակարարություններ)։

Անցնում եմ Փինլանդական հարցին։

Ինչումն եր վերջին՝ յերեքից ավելի ամիսների ընթացքում Ֆինլանդիայում ծալաբած պատերազմի խմասուց։

Դուք գիտեք, վոր այդ իրադարձությունների խմասուն եր՝ Խորհրդային Միության հյուսիս-արևմտյան սահմանների անվտանգության ապահովումը և, ամենից առաջ, լենի-դրադի անվտանգության ապահովումը:

Անցյալ տարվա հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում Խորհրդային կառավարությունը բանակցություն-ներ եր վարում Փինլանդական կառավարության հետ այնպիսի առաջարկների մասին, վորոնց իրականացումը ներկայիս, ավելի ու ավելի շիկացող միջազգային իրադրության մէջ, մենք համարում ենինք միանդամայն անհրաժեշտ ու անհետաձելի՝ յերկրի անվտանգությունն ապահովելու համար և, հատկապես, Լենինգրադի անվտանգության համար։ Այդ բանակցություններից վոչինչ դուրս չեկավ, վորովհետև Փինլանդական ներկայացուցիչները բռնեցին անրարացակամ դիրք։ Հարցի լուծումը պատերազմի դաշտ փոխարժեվեց։ Կարելի յե համոզված կերպով ասել, վոր յեթե Ֆինլանդիայի վերաբերմամբ չինեյին արտաքին ազգեցություններ, յեթե վորոց վերըրդ պետություններ Ֆինլանդիային ավելի քիչ հարաբեյին թշնամական քաղաքականություն վարել Խորհրդային Միության նկատմամբ, ապա Խորհրդային Միությունն ու Ֆինլանդիան արդեն անցյալ տարվա աշնանը հաշտ կերպով համաձայնության իրային միմյանց հետ և գործը կընթանար առանց պատերազմի։ Բայց, չնայած այն բանին, վոր Խորհրդային կառավարությունն իր ցանկությունները հասցրեց մինիմումի, դործը չհաջողվեց վերջացնել դիմանագետական ճանապարհով։

Այժմ, յերբ ուղղմական գործողությունները Ֆինլանդիայում վերջացել են և հաշտության պայմանագիր և սուրազրվել ԽՍՀՄ ու Ֆինլանդական Հանրապետության միջև, պետք ե և կարելի՝ յե Ֆինլանդիայում տեղի ունեցած պատերազմի նշանակության մասին դատել անհերքելի փաստերի հիման վրա։ Իսկ այդ փաստերը խոսում են իրենք իրենց մասին։ Այդ փաստերն ասում են այն մասին, վոր Լենինդրադից վոչ հեռու, ամբողջ Կարելական պարանոցում, խորանարով 50—60 կիլոմետր, Փինլանդական իշխանությունները կառուցել ենին բարձաթիվ և հզոր յերկաթ-բետոններ դրանիցից ու հողից շինված ուղղմական, ամբություններ

Հրետանիով ու գնդացիրներով։ Այդ ամբությունների թիվը չափ հարյուրներով և հաշվվում։ Այդ ուղղմական ամբությունները, մանավանդ յերկաթ-բետոններ կառուցումները, վորոնք հասել եյին զգալի ուղղմական ուժի, ունեցին սոսումներում միացումներ, չըջապատված եյին հատուկ հակառակային հորերով ու գրանիտներ ցցերով և սրաշտպանված եյին սարքավաճառի ականային դաշտիով, ամբողջությամբ վերցված, կազմում եյին այսպես կոչված՝ «Մաններհայմի գիծը», վորը կառուցվել եր համապատասխան սոսաբերկը մանավետների զեկավարությամբ, «Մաժինոյի գծի» և «Զիգֆրիդի գծի» տիպով։ Պետք ենչել, վոր այդ ամբությունները մինչև մեր ուրեր համարվում եյին անառափեկ, այսինքն այնպիսի ամբություններ, վորոնք մինչև այժմ վոչ մի բանակի կողմից խորտակված չեն յեզել։ Պետք ենան նշել, վոր յուրաքանչյուր գյուղակ այդ շրջաններում Փինլանդիան գինալուրական իշխանությունները նախորոք աշխատել եյին վերածել ամրացված կետի, վորն ուներ զենք, ուղիղ անտեննաներ, վառելանյութի ամբարներ և այլն։ Հարավային և արևելյան Ֆինլանդիայում չափ տեղի դրով ընդհուպ դեպի մեր սահմանն անցկացված եյին ստրատեգիական յերկաթուղիներ ու խճուղիներ, վորոնք չունեյին տնտեսական վորեն նշանակություն։

Կարձ ասած, Ֆինլանդիայում տեղի ունեցած պատերազմական գործողությունները ցույց տվին, վոր Ֆինլանդիան և, ամենից առաջ, Կարելական պարանոցն արդեն 1939 թվականին վերածվել եր յերբորդ տերությունների մի պատրաստ սաղմական պլացզարմի՝ Խորհրդային Միության վրա հարձակվելու համար, Լենինգրադի վրա հարձակվելու համար։

Անվիճելի փաստերը ցույց տվին, վոր Փինլանդական քաղաքականության թշնամությունը, վորին մենք բաղկավեցինք անցյալ տարվա աշնանը, պատահական չեր։ Խորհրդային Միության թշնամի ուժերը մեր յերկրի դեմ և, ամենից առաջ, Լենինգրադի դեմ Ֆինլանդիայում պատրաստել եյին այնպիսի սաղմական պլացզարմ, վորը վորոշ, ԽՍՀՄ համար անբարենպաստ արտաքին պարագաներում պետք ե իր

գերը խաղար խմբերի խալիստների հակախորչը քայլեցին ուժերի և Ֆինլանդիայում նրանց զաշնակիցների պլանների մեջ:

Կարմիր Բանակը վո՞չ միայն կործանեց «Մաններհայմի գիծը» և գրանովի իսկ իրեն փառքով պատկեց վորպես առաջին բանակ, վորն ամենալուծվարին պայմաններում ուղի հարթեց միանդամայն ժամանակակից ուազմական ամբությունների զոր մեծ շերտի միջով, — Կարմիր Բանակը՝ Կարմիր Նավատորմի հետ միասին՝ վո՞չ միայն կործանեց Փինլանդական ուազմական պլացղարմը, վորը պատրաստվել եր Լենինգրադի վրա հարձակվելու համար, այլև լիկիլիուտացիայի յննթարկեց հակախորհրդային վորոշ պլաններ, վորոնք վերջին տարիների ընթացքում փայտիալում եյին վորոշ յերրորդ տերությունների կողմից: (Յերկարանկ ծափահարություններ):

Թե վորքան հեռու յեր զնացել թշնամանքը մեր յերկրի նկատմամբ Ֆինլանդիայի կառավարող ու զինվորական շրրջաններում, վորոնք ուազմական պլացղարմ եյին պատրաստում ԽՍՀ Միության դեմ, նաև յերեսում և վիրավոր ու գերի ընկած կարմիր-բանակայինների վերաբերմամբ սպիտակ-ֆինների բացառիկ բարբարության ու գաղանության բազմաթիվ փաստերից: Այսպես, որինակ, յերբ Լադուգայի լճից հյուսիս ընկած շրջաններից մեկում Փինները շրջապատեցին մեր սանիտարական գետնատները, վորտեղ գտնվում եյին 120 ծանր վիրավորներ, նրանք բոլորը վոչնչացվել եյին սպիտակ-ֆինների կողմից. Նրանց մի մասին այլուն եյին, մի մասը գտնվեց ջախջախված գլուխներով, մյուսները մորթված եյին կամ զնողակահարված, չնայած մահացու մերքերի առկայությանը. այլուն, ինչպես և այլ տեղերում զոհվածների զգալի մասն ուներ վլխին արձակված կրակոցների ու հրացանի կոթով ջախջախման հետքեր, իսկ հրազենով սպանվածների մի մասն ուներ Փիննօսկան դանակներով դեմքին հասցված վերքեր: Վորոշ դիակներ դանվեցին կտրված գլուխներով, և գլուխներն այնպես ել չհայտաբերվեցին: Սպիտակ-ֆինների ձեռքն ընկած կինս սանիտարուհիների վերաբերմամբ կիրառվում եյին հատուկ ծաղր ու ծանակ և անսակլի գաղանություններ: Վորոշ դեպքերում սպանվածների դիակները գլխիվայր դիմհար

եյին արվում ծառերին: Այս ամբողջ բարբարոսությունն ու անհամար գաղանությունները Փինլանդական սպիտակ-դվարդիականության քաղաքականության սպուղներն են, վոր ձգտում եր իր ժողովրդի մեջ ատելություն բորբոքել դեպի մեր յերկիրը:

Այս և «արևմտյան քաղաքակալիքության» Փիննօսկան պաշտպանների դեմքը:

Դժվար չեւ տեսնել, վոր պատերազմը Ֆինլանդիայում Հենց սոսկ մի ընդհարում չեր Փիննօսկան զորքերի հետ: Վո՞չ, այսուեղ բանն ալէլի բարդ եր: Այսուղ տեղի ունեցավ մեր զորքերի ընդհարում վո՞չ թե պարզապես Փիննօսկան զորքերի հետ, այլ մի շարք յերկրների իմպերիալիստների միացյալ ուժերի հետ, ներսույալ անդիմական, Փրանսական ու այլ իմպերիալիստների, վորոնք Փինլանդական բուրժուազիային ողնում եյին զենքի բոլոր տեսակներով և հատկապես հրետանիով ու ինքնաթիւններով, ինչպես նաև իրենց մարդկանցով՝ «կամավորների» անվան տակ, իրենց վոսկով ու ամեն տեսակ մատակարարումով, ամբողջ աշխարհում իրենց կատաղի աղիսացիայով՝ Խորհրդային Միության դեմ ամեն կերպ սպատերազմ հրահրելու համար: Այսն պետք և ավելացնել, վոր Խորհրդային Միության թշնամիների ցատկու վոռնոցի մեջ ամբողջ ժամանական դեմքները են ծակել և ինտերնացիոնալի այդ բոլոր պոռնկացած «սոցիալիստների» ձան ձայները (դահլիճում տրախ աշխուժություն), — այդ բոլոր ետալիների և բլյումների, սիտրինների և ժուոնների, տրանմելների և խեղլունդների՝ կտրիտալի այդ լակեյների, վորոնք մինչև վերջն իրենց վաճառել են սպատերազմի հրձիգներին:

Անդիմական վարչակետ Զեմբեռունը մարտի 19-ին հանդիս գալով համայնքների սպատառում, վոչ միայն շար ափսոսներ արտահայտեց այն կապակցությամբ, վոր չհաջողվեց խանգարել պառուերազմի ավարտմանը Փինլանդիայում, դրանով իսկ ամբողջ աշխարհի առջև թարս չուռ տալով իր «խաղաղասեր» իմպերիալիստական հոգին (ծիծաղ), այլև այլեց հաշվետության նմանող ինչ-վոր մի բան այն մասին, թե անդիմական իմպերիալիստները կոնկրետ ինչպես ու ինչպով եյին ձգտում ողնուել սպատերազմի հրահրմանը Ֆինլան-

դիմում՝ ընդգետ կորչրդային Միության։ Զեմքեռլենը հրամարակեց այն ուարմանյութերի ցանկը, վոր խոստացվել և ուղարկվել ելին Ֆինլանդիային։ խոստացվել եր 152 բնթիու, ուղարկված է 101 ինքնաթիո, խոստացվել եր 223 համոթ, ուղարկված է 114-ը։ խոստացվել եր 297 հազար արկ, ուղարկված է 135 հազար։ ՎիկիԷրս թնդանոթներ խոստացվել եր 100 հատ, ուղարկված է 100 հատ։ խոստացվել եր 20.700 ամիսացիոն ուումք, ուղարկված է յեղել 15.700 հատ։ խոստացվել եր 20 հազար հակասանկային ական, ուղարկված է 10 հազար հատ և այլն։ Առանց ամաչելու Զեմքեռլենը պատմում եր նաև այն մասին, վոր «եքապեղիցին զորամասեր ուղարկելու համար նախապատրաստվելը տեղի յե ունեցել առավելագույն արագությամբ, և եքապեղիցին բանակը՝ թվով 100 հազար մարդ, ուղարկելու համար պատրաստ եր մարտի սկզբներին—յերկու ամիս շուրջ այն ժամկետից, վոր Մաններհայմը նշանակել եր նրանց՝ Ֆինլանդիա գարու համար։ Այդ զորքերը չենելին վերջինոր»։

Ահա թե իրականում ի՞նչ դեմք ունի «խաղաղասեր» անդիմական իմպերիալիստը, իր խոհ սեփական խոստովանություններով։

Ի՞նչ վերաբերում է Ֆրանսիային, ապա Փրանսական մամուլի հաղորդագրություններով այնանդից Ֆինլանդիա ելին ուղարկվել՝ 179 բնքնաթիո, 472 հրանոթ, 795 հազար արկ, 5.100 դնդացիք, 200 հազար ձեռքի նոնակ և այլն։ Մարտի 11-ին այն ժամանակվա Փրանսական վարչապետ Դալադյեն Հայտարարեց զեկուտատների պարատում, վոր «Փրանսիան գլխավորում է այն յերկրներին, վորոնք համաձայնիք են ուղղմանյութեր մատակարարել Ֆինլանդիային և, մասնավորապես Ֆրանսիան, Հելսինկիի խնդրանքով, հենց նոր Ֆինլանդիա յե ուղարկել ուլտրաժամանակակից ուժակոծիչներ»։ Դալադյեն Հայտարարել եր, վոր «ինտրովիարի 26-ից Փրանսական զորքերի եքապեղիցին կորպուսը հանդերձավորված ու պատրաստված է։ Զգալի թվով նախերի յերկու խոչը նախաճանդիստներից»։ Դալադյեն նաև

Հայտարարում եր, վոր դաշնակիցներն «ոգնության կգան Ֆինլանդիային՝ խոստացած բոլոր ուժերով»։

Դալադյեյի Խորհրդային Միության վերաբերմանը թշնամական այս հայտարարությունները խոսում են իրենք իրենց մասին։ Սակայն կարիք չկա կանգ առնելու այդ թշնամական հայտարարությունների վրա, քանի վոր դրանց մեջ, ըստ յերենութիւն, արդեն չկա մտքերի լիակատար լուրջ ընթացք։ (Դահլիճում ուրախ աշխուժություն)։

Պետք ե նաև հիշատակել ֆինլանդական պատերազմի մեջ Շվեդիայի մասնակցության մասին։ Շվեդական բոլոր թերթերում հրամարակված հաղորդագրություններով, Շվեդիան Խորհրդային Միության դեմ մղված պատերազմի ժամանակ Ֆինլանդիայի արամադրության տակ գրել եր «վորոց քանակությամբ ինքնաթիւններ, վորոնք կազմում եյին շվեդական այն ժամանակվա բոլոր ուղղմա-ողային ուժերի մոտավորապես մեկ հինգերորդ մասը»։ Շվեդական զինվորական մինիստրի հայտարարությամբ, Փինները Շվեդիայից ստացել եյին 84 հազար հրացան, 575 գնդացիք, ավելի քան 300 հրետանակին հրանոթ, 300 հազար նոնակ, 50 միլիոն փամփուշտ։ Այդ ամբողջ ուղղմանյութը, մինիստրի հայտարարությամբ, յեղել ե. ամենանորագույն տիպի։

Ֆինլանդիայում պատերազմը բորբոքելու գործում հետ չմնաց նաև Բատլիան։ Նա, որինակ, Ֆինլանդիայի յեր ուղարկել 50 ուղղմական ինքնաթիւ։

Ֆինլանդիային ուղղմական ոգնություն եր գալիս նաև «խաղաղությանը» այնքան նվիրված՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից։ (Ընդհանուր ծիծաղ)։

Միայն պատերազմի ընթացքում այլ յերկրներից Ֆինլանդիա ուղարկված ամեն տեսակի սպառագինման ընդհանուր քանակը, վոչ լրիվ տեղեկություններով, հասավ՝ ինքնաթիու-առնելացին 350 հատ, հրետանային հրանոթ-մոտ 1.500, ավելի քան 6.000 գնդացիք, մոտ 100 հազար հրացան, 650 հազար ձեռքի նոնակ, 2.500.000 արկ, 160 միլիոն փամփուշտ և զարգյալ շատ ուրիշ բաներ։

Հարկ չկա բերելու այլ վաստեր, վորոնք հաստատում են, վոր Ֆինլանդիայում խոսքը վերաբերում եր վոչ թե պարզապես մեր ընդհարմանը Փիննական զորքերի հետ, այլ

զոր դա մի ընդհարում եր Խորհրդային Միության նկատմամբ առավել թշնամական մի չարք իմպերիալիստական յերկրների միացյալ ուժերի հետ։ Զախճախելով թշնամիների այդ միացյալ ուժերը, Կարմիր Բանակը և Կարմիր Նավատորմը մի նոր պահապահի եղ զրեցին իրենց պատմության մեջ և ցույց տվին, վոր մեր ժողովրդի մեջ խիզախության, անձնվիրության ու հերոսության աղբյուրն անսպառ ե։ (Բուռն ծափահարություններ)։

Ֆինլանդիայում տեղի ունեցած պատերազմն ինչպես մեզանից, այնպես և Փիններից պահանջեց մեծ զոհեր։ Մեր գլխավոր շտաբի Հաշիմներով մեր կողմի սպանվածների և վերքերից մահացածների քանակը կողմում և 48.745 մարդ, այսինքն՝ 49 հազար մարդուց մի քիչ պակաս, վերաբորների քանակը՝ 158.863 մարդ։ Ֆիննական կողմը փորձում է նվազեցնել իր կրած զոհերը, բայց Փինների զոհերն զգալիորեն տալիք յեն մերինից։ Մեր գլխավոր շտաբի նվազագույն Հաշիմներով, Փինների մոտ սպանվածների քանակը համում և առնվազն 60 հազարի, չհաշված վերքերից մեռածներին, իսկ վիրավորների քանակը կողմում և առնվազն 250 հազար մարդ։ Այսպիսով, յելներով այն բանից, վոր Փիննական բանակի թիվը կազմում եր առնվազն 600 հազար մարդ, պետք ե ընդունել, վոր Փիննական բանակն սպանվածներով ու վիրավորներով կորցրեց իր կողմի ավելի քան կես մասը։

#### Սրանք են փաստերը։

Մնում ե այն հարցը, թե ինչո՞ւ այնուամենայնիվ Անդիսայի ու Ֆրանսիայի, ինչպես նաև միքանի այլ յերկրների կառավարող շրջաններն այդպես ակտիվ կերպով մասնակցում եյին այդ պատերազմին՝ Ֆինլանդիայի կողմում, ընդգեմ Խորհրդային Միության։ Հայտնի յե, վոր Անդիսայի և Ֆրանսիայի կառավարությունները կատաղի ջանքեր եյին գործադրում, վորպեսզի խանդարեյին պատերազմի ավարտմանն ու խաղաղության վերականգնմանը Ֆինլանդիայում, թեև նրանք կապված չեն Ֆինլանդիայի վերաբերմբ վոչ մի տեսակի պարտավորություններով։ Հայտնի յե նաև, վոր ժամանակին, Ֆրանսիայի ու Գելոո-Սլովակիայի միջև գոխազարձ ողնության պակախ տոկայության

դեպքում նույնիսկ, Ֆրանսիան ողնության չեկամվակիային։ Իսկ Ֆինլանդիայի վզին ուղղակի վաթթաթում եյին իրենց ուղմական ողնությունն ինչպես Ֆրանսիան, այնպես ել Անդիսայն, միայն թե խանդարեյին պատերազմի ավարտմանը և խաղաղության վերականգնմանը Ֆինլանդիայի ու Խորհրդային Միության միջև։ Լրագրային խարդախության ու խաբերայության մեջ մասնագիտացած ամեն տեսակ գրչակների թվին պատկանող գրչի վարձկան ավազակները փորձում են անգլո-ֆրանսական շրջանների նման վարժունքը բացատրել «փոքր ժողովուրդների» նկատմամբ հատուկ հոգատարությամբ։ Բայց Անդիսայի և Ֆրանսիայի այդ քաղաքականությունը փոքր պետության շահերի նկատմամբ հատուկ հոգացողությամբ բացատրել այդ՝ Ազգերի լիգայի հանդեպ ունեցած պարտավորություններով, վորն իրը թե պահանջում եր պաշտպանել նրա անդամին, — նույնպես բոլորովին սրամիտ չե։

Իսկապես, գեռ մի տարի ել չի անցել, ինչ իտալիան զավթեց ու վոչնչացրեց անկախ Ալբանիան, վորն Ազգերի լիգայի անդամ եր։ Յեզ ի՞նչ։ Անդիսայն ու Ֆրանսիան հանդես յեկա՞ն արդյոք Ալբանիայի սպաշտանությամբ, նրանք թեկուզ մի թույլ ձայն բարձրացրի՞ն արդյոք իտալիայի զավթողական գործողությունների դեմ, վորը բոնի կերպով իրեն յենթարկեց Ալբանիային, հաշվի չառնելով նրա բնակչությունը, վոր կազմում և ավելի քան մեկ միլիոն մարդ, և ուշադրություն չդարձնելով այն բանի վրա, վոր Ալբանիան Ազգերի լիգայի անդամ եր։ Վո՞չ, վո՞չ անդիսական, վո՞չ ել Ֆրանսական կառավարությունը, վո՞չ Ամերիկայի Միացյալ Նահանգները, վո՞չ Ազգերի լիգան, վորը կորցրել և ամեն մի հեղինակություն՝ այնտեղ նույն այդ անդամ Փրանսական իմպերիալիստների տնորինության հետեանգով, — նույնիսկ մատը չխփեցին այդ առթիվ։ Փոքր ժողովուրդների այդ «պաշտպանները», Ազգերի լիգայի անդամների իրավունքների այդ «ապավիններն» ամբողջ 12 ամսվա ընթացքում այնպես ել սիրո չարին Ազգերի լիգայի քննարկմանը դնել Բատալիայի կողմից Ալբանիայի շափթանակարգը, վոր կատարվեց դեռ անցյալ ամսվա անդրին։ Դեռ

ավելին, նբանք փաստորեն սանկցիա տվին այդ զավթմանը։ Հետևագես, ամենենին ել փոքր ժողովուրբեների պաշտպանությամբ և Ազգերի լիգայի անդամների իրավունքների պաշտպանությամբ չե՛ բացատրվում անդիմական ու Փրանտական կառավարող շրջանների կողմից Ֆինլանդիային աջակցելը՝ ընդուն Խորհրդային Միության։ Այդ աջակցությունը բացատրվում է նրանով, վոր ԽՍՀՄ վրա հարձակվելու համար նրանք Ֆինլանդիայում ունեցին հաստիատի ուղղմական պլացդարձ, իսկ Ալբանիան այդպիսի տեղ չեր դրավում նրանց պլանների մեջ։ Իրականում, վոքր ժողովուրբեների իրավունքներն ու շահերը մանր դրամ են իմպերիալիստների ձեռքում։

Անդիմական իմպերիալիստների ղեկավար «Թայմ» թերթը, ինչպես նաև ֆրանսական իմպերիալիստների ղեկավար «Թան» թերթը, ել չենք խոսում անդիմական ու ֆրանսական բուրժուական մյուս թերթերի մասին, վերջին ամիսներս բացեիքաց ինտերվենցիայի եյին կոչում ընդդեմ Խորհրդային Միության, ամենենին հաշվի չառնելով, վոր մեկ կողմից՝ Անդիմայի ու ֆրանսիայի, և մյուս կողմից՝ Խորհրդային Միության միջև գոյություն ունեն այսպես կոչված՝ նորմալ դիվանագիտական հարաբերություններ։ Բուրժուական այդ ղեկավար թերթերի տոնով, և նույնիսկ նրանցից առաջ վազելով, ճառերով հանդես են դալիս այն բակեցանոցների մարդեկ, վոր ստեղծված են այժմ յուրաքանչյուր «կանոնավոր» բուրժուական պետության մեջ Ետալիի տիպի «սոցիալիստների» համար՝ Անդիմայում, Բլյումի տիպի՝ ֆրանսիայում, վորոնք այնքան չանքեր են գործադրում պատերազմի բորբոքման ու հետագա ընդարձակման համար։ Անդլո-ֆրանսական իմպերիալիստների մամուլի և նրա այդ «սոցիալիստական» ձայնակիցների յելութների մեջ լսվում ե սոցիալիստական տեսությունն սոսող նույն այն դաշտպած խմբի ձայնը, վոր մեզ հայսնի յև Խորհրդային Միության գոյության առաջին որերից։ Դեռ 1919 թվականի ապրիլի 17-ին անդիմական «Թայմ» թերթը գրում եր։

«Յեթե մենք նայենք քարտեղին, ապա կդտնենք, վոր ղեկի Պետրոգրադ տանող լավագույն մատուցյօ

Բալթիկն և և վոր ղեկի այն տանող ամենակարծուածնից ավելից ավելի հեշա ուղին ընկած և Ֆինլանդիայի վրայով, վորի սահմաններն անցնում են Ռուսաստանի մայրաքաղաքից ընդամենը մի 30 մղոն հեռու։ Ֆինլանդիան Գետրոգրադի բանալին և, իսկ Պետրոգրադը Մոսկվայի բանալին ե»։

Յեթե հարկավոր եյին վորեւ ասլացույցներ այն բանի, վոր անդլիմական ու ֆրանսական իմպերիալիստները մինչև այժմ ել չեն հրաժարվել այլպիսի խելագար պլաններից, ապա Ֆինլանդիայում տեղի ունեցած վերջին իրադարձություններից հետո ամեն տեսակի անորոշություններն այդ տեսակետից վերացած են։ Համապատասխան պլանները նորից վիճեցին վո՛չ այն պատճառով, վոր պակասում եյին հակախորհրդային ուժերի ջանքերն Անդիմայում ու ֆրանսական, և վո՛չ պարզապես այն պատճառով, վոր վերջին մոմենտին Ֆինլանդիայի, ինչպես նաև Շվեդիայի ու Նորվեգիայի ղեկավար շրջանները, վերջապես, ցուցաբերեցին վորոշ խոհեմություն։ Այդ պլանները վիճեցին Կարմիր Բանակի փայլուն հաջողությունների շորհիվ, հատկապես Կարելիան պարանոցում (ծափակարություններ)։ Բայց մենք չենք մուտանա, վոր վերջին իրադարձությունները մեզ բոլորի նորից հիշեցրին մեր Կարմիր Բանակի հզորության և մեր յերկրի ամբողջ պաշտպանության հետագա անշեղ ամրապնդման անհրաժեշտությունը։ (Աղմկալից ու յերկրայան ծափակարություններ)։

Փետրվարի սկզբին Փինները պարակտիկ կերպով դրին Ֆինլանդիայում պատերազմը վերջացնելու հարցը։ Շվեդական կառավարության միջոցով մենք իմացանեք, վոր Փինլանդական կառավարությունը կուգեր իմանալ մեր պայմանները, վորոնցով կարելի կիներ վերջացնել պատերազմը։ Նախքան այդ հարցը լուծելը, մենք դիմեցինք Ֆինլանդիայի ժողովրդական կառավարությունը, վորպեսզի իմանալինք նրա կարծիքն այդ հարցի վերաբերյալ ժողովրդական կառավարությունն արտահայտվեց հոգուտ այն բանի, վոր արյունհեղությունը դաշտպարեցնելու և Փինլանդական ժողովրդի դրությունը թեթևացնելու նպատակը

Հարկավոր եր ընդառաջ զնալ պատերազմը վերջացնելու առաջարկին: Այդ ժամանակ մենք առաջարկեցինք այն պայմանները, վորոնք շուտով ընդունվեցին Փինլանդական կառավարության կողմից: Են պետք ե ավելացնեմ, վոր Փինների հետ բանակցություններն սկսվելուց մեկ շաբաթ հետո անգլիական կառավարության կողմից նույնպես ցանկություն արտահայտվեց պարզել միջնորդության հնարավորությունը՝ իր թե Ֆինլանդիայում պատերազմը վերջացնելու նույնակույ (ծիծառ), բայց յերբ Անգլիայում մեր լիազորներկայացուցիչ ընկ. Մայոկին լուղոնին իրադեկ դարձրեց մեր համապատասխան առաջարկների մասին, վորոնք հետաքայում ամբողջությամբ ընդունվեցին Ֆինլանդիայի կողմից, ապա անգլիական կառավարությունը չուղեց ոժանդակել պատերազմը վերջացնելուն և ԽՍՀՄ ու Ֆինլանդիայի միջև հաշտությունը վերականգնելուն: Այնուամենայնիվ, համաձայնությունը ԽՍՀՄ ու Ֆինլանդիայի միջև շուտով կայացավ: Խաղմական գործողությունները դադարեցնելու և խաղաղություն հաստատելու համաձայնության արդյունքները տրված են մարտի 12-ին ստորագրված հաշտության պայմանագրի մեջ: Այդ կազմակցությամբ հարց ծագեց ժողովրդական կառավարության ինքնարձակման մասին, վորը և նրա կողմից իրականացվեց:

Դուք դիտեք հաշտության պայմանագրով սահմանված պայմանները: Այդ պայմանագրի համաձայն կատարված է Ֆինլանդիայի հարավային և մասամբ արևելյան սահմանների փոփոխում: Ամբողջ Կարելիան պարանոցը՝ Վիբորգի և Վիբորդյան ծոցի հետ միասին, Լաղոգայի լճի ամբողջ արևմտյան և հյուսիսային ափերը՝ կեկսորմի և Սորտավալայի հետ անցան Խորհրդային Միությունը: Կանգալակացյի շրջանում, վորոնող Ֆինլանդիայի սահմանը հատկապես մոտիկ էր Մուրմանսկի յերկաթուղուն, կատարված է սահմանի հետքաշում: Խորհրդային Միությանն անցան Սրեդնի և Ռիբաչի թերակղղիների՝ Ֆինլանդիային պականող վոչ մեծ մասերը՝ հյուսիսում, իսկ Ֆիննական ծոցում՝ կղղիների մի վորոշ խումբ՝ Գոգանող կղղու հետ միասին: Բայց դրանից, 30 տարի ժամանակով, կապալի

կարգով, Խորհրդային Միությանն անցալ Խանկո թիրակղղին՝ մերձակա կղղիներով, վորի համար Խորհրդային Միությունը պետք է վճարի յուրաքանչյուր տարի 8 միլիոնն Փիննական մարկ: Այդտեղ կկառուցվի մեր ուղղմածովային բազմ, Ֆիննական ծոցի մուտքն ադրեսախայից պաշտպանելու համար: Պայմանագրիը, բացի դրանից, հեշտացնում է ապրանքների արանգիտի հնարավորությունը Շվեդիայի, Նորվեգիայի և Խորհրդային Միության համար: Դրա հետ միասին, հաշտության պայմանագրիը նախատեսում է փոխադարձաբար ձեռնպահ մնալ միմյանց վրա ամեն անսակ հարձակումից և չմասնակցել միմյանց նկատմամբ թշնամական կուլիցիաների:

Անգլո-Փրանսական մամուլում փորձեր եյին արվում խորհրդային-Փինլանդական պայմանագրիը և, մասնավորաբես, Կարելիական պարանոցը Խորհրդային Միության անցնելը պատկերել վորակես Ֆինլանդիայի անկախության «վոչչացում»: Այդ, իհարկե, արտառոց բան և գտարկախոսություն: Ֆինլանդիան այժմ ել ներկայացնում է մի տերիտորիա, վորը համարյա չորս անգամ ավելի մեծ և, քան Հունգարիան, ութ անգամ ավելի մեծ և, քան Շվեյցարիան: Յեթե վոչ վոք չի տարակուսում, վոր Հունգարիան ու Շվեյցարիան անկախ պետություններ են, ի՞նչպես կարելի յե տարակուսել, վոր Ֆինլանդիան անկախ և սուվերեն չե:

Նույն այդ անգլո-Փրանսական մամուլում գրում եյին, թե Խորհրդային Միությունն իր ուղում է Ֆինլանդիան դարձնել սոսկ միայն Բալթիական պետություն: Հասկանալի յե, վոր դա նույնպես հիմարություն է: Բավական և մասնանշել, վոր ԽՍՀՄ-ը պատերազմի ժամանակ գրավելով Սառուցյալ ովկիանոսին մերձակա՝ Պետամոյի շրջանը, այն կամավոր կերպով նորից վերադարձեց Ֆինլանդիային, քանի վոր անհրաժեշտ գտավ Ֆինլանդիային արամագրել չառչող ովկիանոսային նավահանգիստ: Սրանից հետեւում է, վոր մենք Ֆինլանդիան համարում ենք վոչ միայն բալթիական, այլև հյուսիսային յերկիր:

Ճշմարտությունն անգլո-Փրանսական թերթերի այս

հերբուրանքները չեն, թերթեր, վորոնք հմտություն են ձեռք բերել հակախորհրդային պրոպագանդայի ամեն տեսակ կեղծաղբերի ստեղծման մեջ։ Ճշմարտությունն այլ է, այսինքն՝ այն, վոր Խորհրդային Միությունը, վորը չափական քիննական բանակը և լիակատար հնարավորություն ուներ զբագելու ամբողջ ֆինլանդիան, չդիմեց այդքայլին և չպահանջեց վորեւ կոնտրիբուցիա ի հասուցումն իր պատերազմական ծախսերի, ինչպես վոր կաներ ամեն մի այլ տերություն, այլ իր ցանկությունները սահմանափակեց մինմումով, մեծահոգություն ցուցաբերելով Ֆինլանդիայի վերաբերմամբ։

Վո՞րն ե հաշտության պարմանագրի հիմնական իմաստը։ Այն, վոր պարմանագրին ինչպես հարկն ե պալահովում և լենինգրադի, ինչպես նաև Մուրմանսկի ու Մուրմանսկի յերկաթուղու անվտանգությունը։ Այս անգամ մենք չեյինք կարող սահմանափակվել միայն այն ցանկություններով, վորոնք մեր կողմից առաջարկվեցին անցյալ տարվա աշնաւը և վորոնց ընդունումը Ֆինլանդիայի կողմից՝ կոչանակեր խուսափել պատերազմից։ Այն բանից հետո, յերբ վոչ մեր հանցանքով թափվեց մեր մարտիկների արյունը և մինք համոզվեցինք, թե վորքա՞ն հեռու յե գնացել Փինլանդական կառավարության քաղաքականության թշնամությունը Խորհրդային Միության վերաբերմամբ, մենք պետք ե լենինգրադի անվտանգության հարցը դնելով ավելի հուսալի հիմքի վրա և, բացի գրանից, պետք ե գնելով Սուրբմանսկի յերկաթուղու ու Մուրմանսկի անվտանգության հարցը, Մուրմանսկի, վորը մեր միակ չսառչող ովկիանոսային նավահանգիստն ե արհմուտքում և այդ պատճառով բացառիկ մեծ նշանակություն ունի մեր արտաքին առեւտրի ու առհասարակ այլ յերկրների հետ Խորհրդային Միության կապի համար։ Վոչ մի այլ նպատակ, բացի լենինգրադի, Մուրմանսկի և Մուրմանսկի յերկաթուղու անվտանգությունն ապահովելուց, մենք չեյինք դնում հաշտության պարմանագրի մեջ։ Բայց վրա փոխարեն այդ խնդիրը մենք անհրաժեշտ էյլինք համարում լուծել հուսալիորեն, հաստատում կերպով։ Հաշտության պարմանագրիրը յելում և Ֆինլանդիայի պետական անկախության

սկզբունքի ճանաչումից, նրա արտաքին ու ներքին քաղաքականության ինքնուրույնության ճանաչումից և, դրա հետ միասին, Լենինգրադի ու Խորհրդային Միության հյուսիս-արևելյան սահմանների անվտանգությունն առպահովելու անհրաժեշտությունից։

Այսպիսով, մեր առաջադրամ նպատակը ձեռք ե բերվել, և մենք կարող ենք լիակատար գոհունակություն արտահայտել Ֆինլանդիայի հետ կնքված պայմանագրի առթիվ։ (Ծափակարություններ)։

Այսուհետեւ քաղաքական ու տնտեսական հարաբերությունները Ֆինլանդիայի հետ լիովին վերականգնվում են։ Կառավարությունը համոզմունք է հայտնում, վոր Խորհրդագության Միության ու Ֆինլանդիայի միջև կպարզանանարի դրացիական նորմալ հարաբերությունները։

Սակայն, պետք ե նախագուշացնել հենց նոր կնքված հաշտության պայմանագրի խախտման փորձերից, վոր արդեն արվում են Ֆինլանդիայի, ինչպես նաև Շվեդիայի ու Նորվեգիայի վորուց ըրջանների կողմից, նրանց միջև ռազմա-պատապանողական դաշինք ստեղծելու սրատրվակով։ Նորվեգական ստորանդի նախագահ պ. Խամբրոյի վերջներս արտասանած ճառի լույսով, վորը պատմական որինակների վրա հենվելով Ֆինլանդիային կոչ եր անում «հետ նվաճել յերկրի սահմանները» և հայտարարում եր, թե այսպիսի հաշտությունը, ինչպիսին կնքել է Ֆինլանդիան ԽՍՀՄ հետ, «չի կարող յերկար գոյություն ունենալ», —այդ և նման յելությունների լույսի տակ գիշվար չե հանիսնալ, վոր Ֆինլանդիայի, Շվեդիայի ու Նորվեգիայի այսպես կոչված՝ «պաշտպանողական դաշինք» ստեղծման փորձերն աղջկած են ԽՍՀՄ դեմ և անխօնեմ կերպով հրահրվում են սազմական ռեվանչի իդեոլոգիայով։ Այդպիսի սազմական դաշինքի ստեղծումը՝ Ֆինլանդիայի մասնակցությամբ՝ վոչ միայն կհակասեր հաշտության պարմանագրի Յ-րդ հոգվածին, վորը բացառում է պարմանագրվող կողմերի մասնակցությունը միմյանց նկատմամբ թշնամական կամիցիաների (դաշինքների), այլև կհակասեր ամբողջ հաշտության պարմանագրին, վորը հաստատորեն փորչել և խորհրդային-Ֆինլանդական սահմանը։ Այդ պարմանագրին

Հավատարիմ մնալն անհամառեղելիք յի Ֆինլանդիայի մասնակցության հետ ԽՍՀՄ գեմ ուզզված վարեկ ռազմառունական դաշնութիւն դաշնութիւն դաշնութիւն կականակեր այդ յերկը հրաժարվելը նրանց կողմէց կիրառվող չեղոքության քաղաքականությունից և նրանց անցնելն արտաքին նոր քաղաքականության, վորից Խորհրդային Միությունը չի կարողանա չանել իր համապատասխան հետևությունները:

Իր հերթին, կառավարությունը գտնում է, վոր Խորհրդային Միությունը չունի վիճելի հարցեր Շվեդիայի ու Նորվեգիայի հետ, և վոր Խորհրդային-շվեդական ու խորհրդային-նորվեգական հարաբերությունները պետք են գործանան բարեկամության հիման վրա: Իսկ հակախորհրդագային նպատակներով տարածվող այն լուրերը, թե Խորհրդային Միությունն իրը նախահանդիսաներ են պահանջում Սկանդինավիայի արևմտյան ափերին, թե նա պահանջում է նարպիկը և այլն, այնպիսի արտառող բաներ են, վոր գրանք հարկ չկա նույնիսկ հերքելու: Իսկ պարոնայք «սոցիալիստների» ջանքերը, նման Խեղլունդին՝ Շվեդիայում և Տրանմելին՝ Նորվեգիայում, փչացնելու այդ յերկը նույնիսկ հարաբերությունները Խորհրդային Միության հետ, պետք են անարդանքի ոյունին դամել, վորպես բանվոր դասակարգի ամենավոխերիմ թշնամիների գործ, վորոնք վաճառվել են ոտարելիրյա կապիտալիստներին և դաշտանում են իրենց ժողովրդի շահերին:

Հաշտության պայմանագրի կնքումը Ֆինլանդիայի հետ՝ ավարտում են Բալթիկ ծովի կողմէց Խորհրդային Միության անվտանգությունն ապահովելու ասպարեզում անցյալ տարի գրմած խնդրի կատարումը: Այդ պայմանագրին անհարաժշտ մի լրացում են հստոնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ կնքված փոխադարձ ողնության յերեք պայմանագրերին: Փոխադարձ ողնության այդ պայմանագրերի կնքման ժամանակից անցած կես տարվա փորձի հիման վրա կարելիք յի միանդամայն վորոշակի դրական հետևություններ անել մերձբալթյան յերկրների հետ կնքված պայմանագրերից մասին: Պետք են ընդունել, վոր Խորհրդային

Միության պայմանագրերը Եստոնիայի, Լատվիայի և Լիտվայի հետ՝ նպաստեցին ինչպես Խորհրդային Միության, այնպես և Եստոնիայի, Լատվիայի ու Լիտվայի միջազգային դիրքերի ամրացմանը: Հակառակ այն ահարեեկումներին, վորոնցով զրադվում ելին Խորհրդային Միությանը թշնամի խմլերիալիստական շրջանները, Եստոնիայի, Լատվիայի ու Լիտվայի պետական անկախությունն ու քաղաքականության ինքնուրույնությունը վոչ մի բանով չտուժեցին, իսկ այդ յերկրների տնտեսական հարաբերությունները Խորհրդային Միության հետ սկսելիս ընդարձակվել: Եստոնիայի, Լատվիայի ու Լիտվայի հետ կնքված պայմանագրերի կատարումն ընթանում ե բավարար և նախադրյալներ են ստեղծում Խորհրդային Միության ու այդ պետությունների միջև հարաբերությունների հետագա բարեկալման համար:

Վերջին ժամանակներս ոտարերկրյա մամուլում բացառիկ մեծ տեղ ե համարակացվում Խորհրդային Միության փոխարարերությունների հարցին հարավային սահմանում, մասնակորապես Անդրկովկասում նրա հարմանների ինչպես նաև Խումբնիայի հետ: Հարկավո՞ր ե արդյոք ապացուցել, վոր կառավարությունը վոչ մի հիմք չի տեսնում մեր հարմանների հետ հարաբերությունների վատացման համար նաև հարավում: Ճիշտ ե, այժմ Միրիայում և առհասարակ Մերձավոր արևելքում կասկածելի մեծ աշխատանք ե կատարվում անդրո-ֆրանսական, գերոտանական գաղութային բանակների ստեղծման ասպարեզում՝ զեներալ Վերդանի գլխավորությամբ: Մենք պետք ե զգաստ լինենք այդ գաղութային և վոչ-գաղութային զորքերը Խորհրդային Միության նկատմամբ թշնամական նպատակներով ոգտազործելու փորձերի հանդեպ: Այդ կարգի ամեն տեսակ փորձերը մեր կողմէց կառաջացնեն պատասխան միջոցառումներ ընդդեմ ագրեսորների, ըստվորում կրակի հետ արդարի խաղի վանդակորությունը պետք ե միանդամայն ակնհայտ լինի ԽՍՀՄ նկատմամբ թշնամական տերությունների համար և մեր հարեաններից նրանց համար, ովքեր կտառնան ԽՍՀՄ գեմ ուղղված այդ պղբեսսիկ քաղաքականության վենքը: (Մափահարություններ): Իսկ

ինչ վերաբերում և մեր հարաբերություններին Թյուրքիա-  
յի և Իրանի հետ, ապա դժուար բնորոշվում են մեր միջև  
գոյություն ունեցող՝ միմյանց վրա չհարձակվելու պայմա-  
նագրերով և Խորհրդային Միության անշեղ ձգտմամբ՝ կա-  
տարելու դրանից բղխող փոխադարձ պարտավորություննե-  
րը։ Մեր հարաբերություններն Իրանի հետ անտեսական  
բնադրավառում կարգավորվեցին Հենց նոր կնքված խորհր-  
դային-իրանական առևտրական պայմանագրով։

Իմ հիշատակած հարավային հարեան պետություննե-  
րից մենք միմյանց վրա չհարձակվելու պակտ չունենք  
մուռմինիայի հետ։ Այդ բացատրվում և չլուծված վիճելի  
հարցի, Բեսարաբիայի հարցի առկայությամբ, Բեսարա-  
բիայի, վորք զավթումը նուռմինիայի կողմից Խորհրդային  
Միությունը յերբեք չի ճանաչել, թեկուզ և յերբեք հարց  
չի դրել Բեսարաբիան պատերազմի միջոցով վերադարձ-  
նելու մասին։ Ուստի, չկա վորքե հիմք նաև խորհրդային-  
ուումինական հարաբերությունների վորքե վատացման հա-  
մար։ Ճիշտ և, մենք յերկար ժամանակ նուռմինիայում չու-  
նենք լիազոր-ներկայացուցիչ և նրա պարտականություննե-  
րը կատարում և գործերի հավատարմատարը։ Բայց այդ  
առաջ և յեկել վոչ չեռու անցյալի սպեցիֆիկ առանձնա-  
հատկությունների հետեանքով։ Յեթե չոչափենք այդ հար-  
ցը, ապա պետք և հիշեցնել ուումինական իշխանություննե-  
րի անբարյացակամ դերը 1938 թվականին, այն ժամանակ  
նուռմինիայում խորհրդային լիազոր-ներկայացուցչի պար-  
տականությունները կատարող Բուտենկոյի վերաբերմամբ։  
Ենչպէս հայտնի յէ, այդ վերջինն ինչ-վոր յեղանակով այն  
ժամանակ խորհրդավոր կերպով անհետացավ վոչ միայն  
լիազոր-ներկայացուցչությունից, այլև նուռմինիայից, և  
խորհրդային կառավարությանն այնպես ել չհաջողվեց հա-  
վատի վորքե բան պարզել այդ անհետացման մասին,  
ըստվորում մենք, իբր թէ, պետք և հավատայինք, վոր  
ուումինական վոչ մի տեսակի իշխանություններ առնչու-  
թյուն չեն ունեցել այդ խայտառակ-հանցավոր գործի հետ։  
Ավելորդ և ասել, վոր քաղաքակիրթ պետության մեջ և  
առհասարակ քիչ թէ շատ բարեկարգ յերկում այդպիսի  
բաներ չպետք և տեղի ունենան։ Դրանից հետո հասկանալի

յե Ռումինիայում խորհրդային լիազոր-ներկայացուցիչ  
նշանակելու հարցում տեղի ունեցած ձգձգումը։ Պետք է,  
սակայն, կարծել, վոր Ռումինիան կհասկանա, վոր նման  
բաներն անհանդուրծելի յեն։

Յապոնիայի հետ մեր հարաբերությունների մեջ մենք  
վո՞չ առանց վորոշ գժվարությունների, բայց այնուամե-  
նայիլ լուծեցինք միքանի հարցեր։ Այդ և վկայում ան-  
ցյալ տարբա գեկտեմբերի 31-ին կնքված խորհրդային-յա-  
պոնական համաձայնությունը ձկնորսական հարցի վերա-  
բերյալ ընթացիկ տարբա, ինչպես նաև Յապոնիայի համա-  
ձայնությունը՝ վճարելու Զին-արքելյան յերկաթուղու դի-  
մաց հապանելիք վերջին, նրա կողմից յերկար ժամանակ  
ուշացրած դրսմական մուծումը։ Այնուամենայիլ չի կա-  
րելի մեծ զոհունակություն արտահայտել Յապոնիայի հետ  
մեր հարաբերությունների վերաբերմամբ։ Այսպիս, որի-  
նակ, մինչև այժմ, չնայած խորհրդային-մոնղոլական և  
յապոնա-մանջուրական զելեզատաների միջև տեղի ունեցած  
յերկարակ բանակցություններին, անլուծելի յի մնացել  
անցյալ տարի տեղի ունեցած ուազմական կոնֆլիկտի ըրջա-  
նում գտնվող տերիտորիայի վրա սահմանը վորոշելու կա-  
րելոր հարցը։ Յապոնական իշխանությունները շարունա-  
կում են խոչընդոտներ ստեղծել Զին-արքելյան յերկաթու-  
ղու համար Յապոնիայի կատարած վերջին դրսմական մու-  
ծումը նորմալ կերպով ոգտագործելու հարցում։ Շատ  
զեպքերում միանգամայն աննորմալ և յապոնական իշխա-  
նությունների վերաբերմունքը խորհրդային որդանների աշ-  
խատակիցների նկատմամբ՝ Յապոնիայում և Մանջուրիա-  
յում։ Յապոնիայում պետք և վերջապես հասկանան, վոր  
հորհրդային Միությունը վոչ մի զեպքում թույլ չի առ,  
վոր խախտվեն իր շահերը (յերկարակ ծափակարություն-  
ներ)։ Խորհրդային-յապոնական հարաբերությունների այս-  
պիսի ըմբռնման զեպքում միայն նրանք կարող են զարգա-  
նալ բավարար կերպով։

Յապոնիայի կատարած համաձայն յերկու խոսք կատեմ մի  
այսպես ասած՝ վոչ-զործարար հարցի մասին (դակիթաւմ  
ուրախ աշխատման վեցություն)։ Որերս յապոնական պարամենու-  
մի զեպքում իր կառավարության առաջադրել եր այս-

սիւսի հարց . «Զպե՞տք և արդյոք մտածել , թե ինչ կերպ արմատապես վերջ դնել ԽՍՀՄ ու Յապոնիայի միջև տեղի ունեցող կոնֆլիկտներին , որինակ , Պրիմորյեն և այլ տերիտորիաներ դնելու միջոցով» : (Ծիծաղի պոռքկում) : Այդ հարցը տվող յապոնական դեպուտատը , վորը հետաքրքրում է խորհրդային տերիտորիաների գնամամբ , վորոնք չեն վաճառվում (ծիծաղ) , առնվազն ուրախ մարդ է : (Ծիծաղ , ծափահարություններ) : Բայց իր տիմար հարցերով նա , իմ կարծիքով չեր բարձրացնում իր պառլամենտի հեղինակությունը : (Ծիծաղ) : Սակայն , յեթե յապոնական պառլամենտում այդպես ուժեղ տարվում են առևտրով , լավ չե՞ր լինի արդյոք՝ այդ պառլամենտի դեպուտատներն զբաղվելին հարավային Սախալինի վաճառքով : (Ծիծաղ , յերկարանություններ) : Յես չեմ տարակուսում , վոր ԽՍՀՄ մեջ գնորդներ կդանուիլին : (Ծիծաղ , ծափահարություններ) :

Ինչ վերաբերում է մեր հարաբերություններին Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ , ապա դրանք վերջին ժամանակներու չեն բարելավվել ու , թերևս , չեն ել վատացել , յեթե չհաշվենք այսպես կոչված «բարոյական և մարդուն» ԽՍՀՄ գեմ , մի բան , վորը զուրկ է վորեւե իմաստից , մահավանդ այժմ , ԽՍՀՄ ու Ֆինլանդիայի միջև հաշտություն կնքվելուց հետո : Մեր իմպորտն ԱՄՆ-ից՝ անցյալ տարվա համեմատությամբ աճել է : Բայց այն կարող եր ե'լ ավելի աճել , յեթե ամերիկյան իշխանությունները խոչընդուներ չհարուցելին : Այս և , ամբողջությամբ վերցրած , միջադարյան իրագործությունը վերջին հինգ ամիսների ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների կազմակցությունը :

Վերևում ամբողջ ասվածից յերևում ե , թե մենք ինչումն ենք տեսնում մեր արտաքին քաղաքականության վըլիսավոր ինդիքտային իրադրության մեջ :

Կարծ ասած , մեր արտաքին քաղաքականության խրնդիրներն այն են , վոր ապահովենք խաղաղությունը ժողովությունների միջև և մեր յերկրի անվտանգությունը : Դրանից արվող հետեւությունն եւ չեղոքության դիրքը և Յելրուսայի խոշորագույն տերությունների միջև ծագած պա-

տերապմին չմասնակցելը : Այդ դիրքը հիմնված է մեր կընքած պայմանագրերի վրա և այն լիովին համապատասխանում է Խորհրդային Միության շահերին : Այդ դիրքը միևնույն ժամանակ զարդարություն և գործում Ցելուսպայում պատերազմի ծավալման ու բորբոքման նկատմամբ , ուստի և այն ողուտ ե բոլոր ժողովուրդների շահերին , վորոնք ձգտում են խաղաղության և վորոնք արդեն տնքում են պատերազմի հետեւանքով առաջացած նոր հսկայական գրկանքներից :

Ամփոփելով վերջին ժամանակաշրջանի հանրագումարները , մենք տեսնում ենք , վոր մեր յերկրի անվտանգությունն ապահովելու գործում մենք այս ժամանակվա ընթացքում ձեռք ենք բերել վոչ-փոքր հաջողություններ : Դա՛ ել հենց կատաղեցնում ե մեր թշնամիներին : Իսկ մենք հավատալով մեր գործին և մեր ուժերին , մեր արտաքին քաղաքականությունն ամենայն հետեւողականությամբ անշեղորեն կշարունակենք նաև հետագայում :

(Ամբողջ դահլիճն բուռն , յերկարատև ծափահարություններ : Դեպուտատները վատքի յեն կանգնում) :



Խմբագիր Բ. Ն. Գալքյան  
Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան  
Մըրագրիչ Լ. Հակոբյան  
Կոնսուլ սըրագրիչ Լ. Արովյան

---

Գլամշլիմի լիազոր վ. 1144, հրատ. № 817  
պատվեր № 122, տիրաժ 7000  
Հանձնվել ե արտադրության 3/IV 1940 թ.  
Ստորագրվել ե ապագրելու 10/IV 1940 թ.  
Գինը 15 կ.

---

Քաղաքական գրականության պետական հրատափակչության տպարան,  
Քերեկան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0198055

Գիրք 16 Կ.

В. М. МОЛОТОВ

ВНЕШНЯЯ ПОЛИТИКА ПРАВИТЕЛЬСТВА

Государственное издательство политической литературы  
Ереван • 1940